

**OD 603.75-14L**

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»  
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ խորհրդի  
« 13 » օգոստոսի 2010թ.

թիվ 185L որոշմամբ

խորհրդի նախագահ

ԿԱՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ \_\_\_\_\_



**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ**

**ԿԱՐԳ**



### 1. ՆՊԱՏԱԿ

Սույն կարգի նպատակն է սահմանել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

### 2. ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1. Սույն կարգը կիրառվում է Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի և հաշվապահական հաշվառման դեպարտամենտի կողմից:

2.2. Սույն կարգը տարածվում է Բանկի հետ արժեթղթերով պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած, կամ նման պայմանագիր կնքելու պատրաստակամություն հայտնած ֆիզիկական (այդ թվում անհատ ձեռնարկատեր) կամ իրավաբանական անձանց վրա:

### 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ISO 9001:2008,

### 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

«Բանկ»՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ,

«ՀՀ պետական պարտատոմս»՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսեր և (կամ) ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր,

«ոչ պետական արժեթուղթ»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթեր, բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի,

«արժեթուղթ»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթեր,

«պահառու»՝ թողարկողի առջև արժեթղթերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պահառուական գործունեություն իրականացնող մարմին, որը ՀՀ պետական պարտատոմսերի դեպքում ՀՀ կենտրոնական բանկն է, ՀՀ ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիան, այլ արժեթղթերի դեպքում՝ համապատասխան երկրի դեպոզիտարիա կամ պահառուական գործունեություն իրականացնող լիազորված այլ անձը,

«ենթապահառու»՝ պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որում հաշվառվում են ներդրողներին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը՝ ըստ առանձին սեփականատերերի,

«դեպո հաշիվ»՝ արժեթղթերի հաշվառման համար նախատեսված պահառուի (ենթապահառուի) գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով,

«հաճախորդ»՝ Բանկի հետ արժեթղթերով պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած, կամ նման պայմանագիր կնքելու պատրաստակամություն հայտնած ֆիզիկական (այդ թվում անհատ ձեռնարկատեր) կամ իրավաբանական անձ,

«պահառուական ծառայություն»՝ արժեթղթերի նկատմամբ և արժեթղթերից բխող իրավունքների հաշվառման և փոխանցման գործունեություն: Պահառուական ծառայությունը ներառում է նաև սույն կարգով և պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված այն ծառայությունները, որոնք նպաստում են արժեթղթերով սահմանված իրավունքների իրականացմանը՝ այդ թվում դիսկոնտի, արժեկտրոնային եկամտի, տոկոսների, մարվող պարտատոմսերի գումարների ստացմանը:

### 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

5.1. Բանկի խորհրդի՝ 13.04.2012թ. թիվ 29Լ որոշմամբ կարգի 7.1.6 կետում կատարվել է փոփոխություն:

## 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 7. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### 7.1. Ընդհանուր դրույթներ

7.1.1. Բանկում պահառուական ծառայություններ մատուցում է ներդրումային ծառայություններ մատուցող պատասխանատու ստորաբաժանումը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի:

7.1.2. Պահառուական ծառայության հետ կապված բոլոր գործառնությունները իրականացնում է ներդրումային ծառայությունների մատուցման պատասխանատու ստորաբաժանման որակավորված աշխատակիցը(ները):

7.1.3. Սույն կարգը կրում է հրապարակային բնույթ և պետք է հասանելի լինի շահագրգիռ անձանց համար:

7.1.4. Սույն կարգը հանդիսանում է Բանկի և հաճախորդի միջև կնքվող պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժան մասը: Բանկը տեղեկացնում է հաճախորդներին սույն կարգում և սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգերում կատարված փոփոխությունների մասին՝ վերջիններիս ուժի մեջ մտնելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

7.1.5. Բանկում պետք է բացառվի հաճախորդներին վերաբերող տեղեկատվության օգտագործումը Բանկի աշխատակիցների կամ դրանց հաղորդումը երրորդ անձանց, որոնք կարող են այդ տեղեկատվությունը օգտագործել ի վնաս հաճախորդների շահերի: Բանկը պետք է ապահովի հաճախորդի հաշվի գաղտնիությունը և անվտանգությունը:

7.1.6. Պահառուական ծառայություններ մատուցման հետ կապված բոլոր սակագները հաստատվում են Բանկի վարչության կողմից:

#### 7.2. Արժեթղթերով պահառուական ծառայությունների մատուցումը

7.2.1. Բանկը, որպես ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի գործակալ, մատուցում է պահառուական ծառայություններ՝ ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընդունված իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

7.2.2. Բանկը, որպես Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ, մատուցում է ոչ պետական պարտատոմսերով պահառուական ծառայություններ՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ» ԲԲԸ և «Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից ընդունված կանոնների համաձայն:

7.2.3. Արժեթղթերով պահառուական ծառայություններ մատուցվում են համաձայն Բանկի և հաճախորդի միջև կնքված՝ արժեթղթերով պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթների՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.4. Մինչև պայմանագրի կնքումը Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել իր մասին տեղեկություններ՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.5. Մինչև պայմանագրի կնքումը Բանկը պարտավոր է հաճախորդին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ (Բանկի, Բանկում գործող սակագների, Բանկի հետ կապ հաստատելու միջոցների,



հանձնարականների ձևերի, աշխատանքների կատարման հաջորդականության և այլնի վերաբերյալ՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.6. Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած յուրաքանչյուր հաճախորդի համար բացվում է առանձնացված դեպո հաշիվ:

7.2.7. Արժեթղթերը հաճախորդի դեպո հաշվում հաշվառվում են ըստ իրավունքների և արժեթղթերի տեսակների:

7.2.8. Հաճախորդը իրավունք ունի օգտվել Բանկի կողմից առաջարկվող բոլոր պահառուական ծառայություններից՝ համաձայն պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթների և Բանկում գործող սակագների:

7.2.9. Հաճախորդը իրավունք ունի ստանալ քաղվածքներ իր դեպո հաշվի մնացորդի և շարժի վերաբերյալ, ներկայացնել հանձնարականներ Բանկին՝ համապատասխան փոխանցումները իրականացնելու համար, և իրականացնել արժեթղթերով գործառնություններ՝ համաձայն պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի:

7.2.10. Հաճախորդների հետ պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը, հաճախորդներից հանձնարարականների ստացումը, կատարումը, համապատասխան հաշվետվությունների ներկայացումը կատարվում է սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.11. Արժեթղթերով հավաստված և արժեթղթերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքների ամրագրման, փոխանցման, դադարեցման և այլ գործառնությունները գրանցելու համար Բանկը պետք է ունենա դեպո հաշվառման համակարգ՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.12. Դեպո հաշվառումը ապահովելու համար Բանկը վարում է դեպո հաշիվներ, դեպո հաշվառման քարտեր, մատյաններ և պահում է դեպո հաշվառման հետ առնչվող՝ ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.13. Բանկի կողմից արժեթղթերով կատարվող գործառնությունների տեսակները (առաջնային աճուրդներին մասնակցությունը, պարտատոմսերի մարումների իրականացումը, բաժնետոմսերի շահաբաժինների վճարումը, դիսկոնտի, տոկոսային, արժեկտրոնային եկամտի վճարումը, պարտատոմսերի մարումը, արժեթղթերի առքը ու վաճառքը, գրավադրումը և այլն), գործառնությունների հետ կապված դրամական հաշվարկների իրականացումը կատարվում է սույն կարգի հիման վրա ընդունված ընթացակարգերով և Բանկում գործող այլ ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

7.2.14. Հաճախորդի հետ կնքված պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման դեպքում Բանկը հաճախորդի պարտատոմսերը փոխանցում է այլ ենթապահառուի մոտ հաշվառման՝ տրամադրելով սպառիչ տեղեկատվություն տվյալ պարտատոմսերի նկատմամբ իր մոտ գրանցված ցանկացած իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:

7.2.15. Բանկը իրավունք չունի առանց հաճախորդի հանձնարարականի հաճախորդի դեպո հաշվում առկա արժեթղթերով գործառնություններ իրականացնել, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընդունված իրավական ակտերով կամ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգերով սահմանված դեպքերի: